



GLOBAL CONVENTION ON THE RECOGNITION
OF QUALIFICATIONS CONCERNING HIGHER EDUCATION

CONVENTION MONDIALE SUR LA RECONNAISSANCE DES
QUALIFICATIONS RELATIVES À L'ENSEIGNEMENT SUPÉRIEUR

CONVENCIÓN MUNDIAL SOBRE EL RECONOCIMIENTO DE LAS
CUALIFICACIONES RELATIVAS A LA EDUCACIÓN SUPERIOR

ГЛОБАЛЬНАЯ КОНВЕНЦИЯ О ПРИЗНАНИИ КВАЛИФИКАЦИЙ,
ОТНОСЯЩИХСЯ К ВЫСШЕМУ ОБРАЗОВАНИЮ

الاتفاقية العالمية للاعتراف بالمؤهلات المتعلقة بالتعليم العالي

承认高等教育相关资历全球公约



**«ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ
ՓՈԽՃԱՆԱԶՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ**

Փարիզ, 2019 թվականի նոյեմբերի 25

**«ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ
ՓՈԽՃԱՆԱԶՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ**

ՆԱԽԱԲԱՆ

Միավորված ազգերի կրթության, գիտության եւ մշակույթի կազմակերպության Գլխավոր խորհրդաժողովը, հանդիպելով 2019 թվականի նոյեմբերի 12-27-ը Փարիզում տեղի ունեցած իր 40-րդ նստաշրջանում,

Առաջնորդվելով Կողմ պետությունների միջեւ կրթական, աշխարհագրական, մարդասիրական, մշակութային, գիտական եւ սոցիալ-տնտեսական կապերն ամրապնդելու, ինչպես նաեւ տարածաշրջանների միջեւ երկխոսությունն ու ճանաչման վերաբերյալ դրանց փաստաթղթերի եւ ընթացակարգերի փոխանցումն ընդլայնելուն ուղղված ընդհանուր ձգտումով,

Վկայակոչելով Միավորված ազգերի կրթության, գիտության եւ մշակույթի կազմակերպության **(ՅՈՒՆԵՍԿՕ)** սահմանադրությունը, համաձայն որի՝ «Կազմակերպության նպատակն է կրթության, գիտության եւ մշակույթի միջոցով ազգերի միջեւ համագործակցության ընդլայնմամբ նպաստել խաղաղության եւ անվտանգության ամրապնդմանը»,

Հաշվի առնելով ՄԱԿ-ի 1945 թվականի կանոնադրության, 1948 թվականի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիայի եւ դրան կից 1967 թվականի արձանագրության, «Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին» 1954 թվականի կոնվենցիայի, «Կրթության բնագավառում խտրականության դեմ» ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1960 թվականի կոնվենցիայի եւ մասնավորապես դրա 4ա հոդվածի, «Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին» 1966 թվականի միջազգային դաշնագրի եւ «Տեխնիկական եւ մասնագիտական կրթության մասին» ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1989 թվականի կոնվենցիայի դրույթները,

Հաշվի առնելով «Բարձրագույն կրթության բնագավառում ուսումնառության եւ որակավորումների ճանաչման մասին» ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1993 թվականի առաջարկությունը, «Բարձրագույն կրթության բնագավառում դասախոսական կազմի կարգավիճակի վերաբերյալ» ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1997 թվականի առաջարկությունը, «Տեղաբնիկ ժողովուրդների իրավունքների մասին» ՄԱԿ-ի 2007 թվականի հռչակագիրը եւ «Գիտական գործունեության եւ գիտական աշխատողների [հետազոտողների] մասին» ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2017 թվականի առաջարկությունը,

Հիմք ընդունելով բարձրագույն կրթությանը վերաբերող որակավորումների ճանաչման վերաբերյալ ՅՈՒՆԵՍԿՕ-ի տարածաշրջանային կոնվենցիաները,

Վերահաստատելով Կողմ պետությունների՝ բոլոր մակարդակներում որակյալ ներառական եւ հավասար կրթություն եւ բոլորի համար հարատեւ ուսուցման հնարավորություններ ապահովելու պարտականությունը,

Հաշվի առնելով բարձրագույն կրթության ոլորտում միջազգային համագործակցության ընդլայնումը, ուսանողների, աշխատողների, մասնագետների, հետազոտողների եւ գիտնականների շարժունակությունը, գիտահետազոտական ոլորտում փոփոխությունները, ինչպես նաեւ ուսուցման եւ ուսումնառության բազմաթիվ ձեւերը, մեթոդները, այդ ոլորտում զարգացումները եւ նորարարությունները,

Դիտարկելով թե՛ պետական եւ թե՛ մասնավոր հաստատությունների կողմից տրամադրվող բարձրագույն կրթությունը որպես հանրային բարիք եւ հանրային պատասխանատվություն եւ **գիտակցելով** ակադեմիական ազատության եւ բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնավարության սկզբունքները պահպանելու եւ պաշտպանելու անհրաժեշտությունը,

Համոզված լինելով, որ բարձրագույն կրթությանը վերաբերող որակավորումների միջազգային ճանաչումը կոյուրացնի փոխկապակցված ուսուցումը եւ գիտելիքների զարգացումը սովորողների եւ ուսուցման գործընթացի, գիտնականների, գիտական հետազոտության գործընթացի ու հետազոտողների, ինչպես նաեւ աշխատողների ու մասնագետների շարժունակության միջոցով, կընդլայնի բարձրագույն կրթության ոլորտում միջազգային համագործակցությունը,

Հարգելով Կողմ պետությունների մշակութային բազմազանությունը, այդ թվում՝ ի թիվս այլնի, կրթական ավանդույթների եւ բարձրագույն կրթության արժեքների միջեւ առկա տարբերությունները,

Ցանկանալով արձագանքել բարձրագույն կրթությանը վերաբերող որակավորումների ճանաչման վերաբերյալ ՅՈՒՆԵՍԿՕ-ի տարածաշրջանային կոնվենցիաները լրացնելու նպատակով բարձրագույն կրթությանը վերաբերող որակավորումների ճանաչման մասին համաշխարհային կոնվենցիա ունենալու անհրաժեշտությանը եւ ամրապնդել դրանց միջեւ կապը,

Համոզված լինելով, որ անհրաժեշտ է գտնել համաշխարհային մակարդակում ճանաչման գործելակերպերի բարելավմանն ուղղված համընդհանուր, գործնական եւ թափանցիկ լուծումներ,

Համոզված լինելով, որ սույն կոնվենցիայի ընդունումը կխթանի միջազգային

շարժունակությունը, ինչպես նաև ճանաչման համար արդար եւ թափանցիկ ընթացակարգերի մասով հաղորդակցումը եւ համագործակցությունը, ինչպես նաև համաշխարհային մակարդակում բարձրագույն կրթության որակի ապահովումն ու ակադեմիական ազնվությունը,

Ընդունում է սույն կոնվենցիան 2019 թվականի նոյեմբերի քսանհինգին:

ԲԱԺԻՆ I. ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Հոդված I

Սույն կոնվենցիայի նպատակով կիրառվում են հետեւյալ սահմանումները.

(բարձրագույն կրթության) մատչելիություն՝ որակավորում ունեցող ցանկացած անհատի տրված՝ բարձրագույն կրթության որոշակի մակարդակում կրթություն ստանալու համար դիմելու եւ ընդունելության համար դիտարկվելու իրավունք.

(բարձրագույն ուսումնական հաստատություններ եւ բարձրագույն կրթության ծրագրերով) ընդունելություն՝ որակավորված դիմորդների՝ կոնկրետ հաստատությունում եւ (կամ) կոնկրետ ծրագրով բարձրագույն կրթության շարունակումը թույլատրելու գործողություն կամ համակարգ.

դիմորդ՝

- ա) անհատ, որը ճանաչման հարցերով իրավասու մարմնի գնահատմանը եւ (կամ) ճանաչմանն է ներկայացնում որակավորումը, մասնակի ուսումնառությունը կամ նախորդ ուսուցումը, կամ
- բ) անհատի համաձայնությամբ եւ նրա անունից գործող սուբյեկտ.

գնահատում՝ դիմորդի որակավորումների, մասնակի ուսումնառության կամ նախորդ ուսուցման գնահատում ճանաչման հարցերով իրավասու մարմնի կողմից, որն իրականացնում է որակավորումների գնահատում.

իրավասու մարմին՝ անհատ կամ սուբյեկտ, որն ունի որոշակի գործառույթ իրականացնելու լիազորություն, իրավասություն կամ իրավունք.

ճանաչման հարցերով իրավասու մարմին՝ սուբյեկտ, որը Կողմ պետության օրենքներին, կարգավորումներին, քաղաքականություններին կամ գործելակերպերին համապատասխան գնահատում է որակավորումները եւ (կամ) կայացնում է որակավորումների ճանաչման վերաբերյալ որոշումներ.

բաղկացուցիչ միավորներ՝ սույն կոնվենցիայի Կողմ պետության՝ ենթաազգային իրավազորության մակարդակի պետական սուբյեկտներ, օրինակ՝ մարզեր, նահանգներ, կոմսություններ կամ կանտոններ՝ սույն կոնվենցիայի դաշնային կամ ոչ ունիտար սահմանադրական համակարգերի մասին XX բ) հոդվածին համապատասխան.

անդրսահմանային կրթություն՝ կրթության տրամադրման ցանկացած եղանակ, որը ներառում է Կողմ պետությունների սահմաններով մարդկանց, գիտելիքների, ծրագրերի, կրթական ծառայություններ մատուցողների եւ ուսումնական ծրագրերի շարժ՝ ներառելով հետեւյալը, բայց չսահմանափակվելով դրանցով՝ որակի ապահովման ընթացակարգն անցած՝ միջազգային համատեղ աստիճան տրամադրող ծրագրեր, անդրսահմանային բարձրագույն կրթություն, անդրազգային կրթություն, օֆշորային [կոնկրետ երկրի հետ կապվածություն չունեցող] կրթություն եւ կրթություն՝ առանց սահմանների.

տեղահանված անձ՝ անհատ, որը ստիպված է իր բնակության վայրը կամ միջավայրը եւ մասնագիտական գործունեությունը տեղափոխել մեկ այլ բնակության վայր կամ միջավայր.

Ֆորմալ կրթության համակարգ՝ Կողմ պետության կրթական համակարգ, այդ թվում՝ կրթության համար պատասխանատու՝ պաշտոնապես ճանաչված բոլոր սուբյեկտները, ինչպես նաեւ բոլոր մակարդակների պետական ու մասնավոր ուսումնական հաստատությունները, որոնք ճանաչված են Կողմ պետության իրավասու մարմինների կողմից եւ դրանց կողմից լիազորված են տրամադրելու ուսուցում եւ մատուցելու կրթական բնույթի այլ ծառայություններ.

Ֆորմալ ուսուցում՝ պլանավորված կրթական միջավայրում իրականացվող գործունեության արդյունքում ստացվող ուսուցում, որն ամփոփվում է ֆորմալ որակավորման ստացմամբ եւ տրամադրվում է Կողմ պետության իրավասու մարմինների կողմից ճանաչված եւ ուսուցման այդպիսի գործունեություն իրականացնելու համար լիազորված ուսումնական հաստատության կողմից.

բարձրագույն կրթություն՝ հետմիջնակարգ կրթության մակարդակի բոլոր տեսակի ուսումնական ծրագրերը կամ ուսումնական դասընթացների շարք, որոնք Կողմ պետության իրավասու մարմնի կամ դրա բաղկացուցիչ միավորի կողմից ճանաչվում են որպես դրա բարձրագույն կրթության համակարգին պատկանող մաս.

բարձրագույն ուսումնական հաստատություն՝ բարձրագույն կրթություն տրամադրող հաստատություն, որը Կողմ պետության իրավասու մարմնի կամ դրա բաղկացուցիչ միավորի կողմից ճանաչվում է որպես դրա բարձրագույն կրթության

համակարգին պատկանող մաս.

բարձրագույն կրթության ծրագիր՝ հետմիջնակարգ ուսումնական ծրագիր, որը Կողմ պետության կամ իրավասու մարմնի կամ դրա բաղկացուցիչ միավորի կողմից ճանաչվում է որպես դրա բարձրագույն կրթության համակարգին պատկանող մաս, եւ որը հաջողությամբ ավարտելու դեպքում ուսանողը ձեռք է բերում բարձրագույն կրթության որակավորում.

ինֆորմալ ուսուցում՝ ֆորմալ կրթության համակարգից դուրս ուսուցում, որը ձեռք է բերվում աշխատանքի, ընտանեկան կյանքի, տեղական համայնքի կամ ժամանցի հետ կապված առօրյա գործունեության արդյունքում.

միջազգային համատեղ աստիճան՝ անդրսահմանային կրթական աստիճանի տեսակ՝ միասնական աստիճան, որը ճանաչվում եւ (կամ) համատեղ հաստատվում ու շնորհվում է ինտեգրված, համակարգված եւ համատեղ առաջարկվող ծրագրի ավարտից հետո՝ մեկից ավելի երկրի պատկանող երկու կամ ավելի բարձրագույն հաստատությունների կողմից.

ուսուցման արդյունքներ՝ ուսուցման գործընթացն ավարտելուց հետո սովորողի ձեռք բերած գիտելիքներ եւ հմտություններ

հարատեւ ուսուցում՝ ուսուցման գործունեության բոլոր տեսակներին առնչվող գործընթաց՝ ֆորմալ, ոչ ֆորմալ կամ ինֆորմալ, որն ընդգրկում է կյանքի ամբողջ ընթացքը եւ նպատակ ունի բարելավելու եւ զարգացնելու մարդու կարողությունները, գիտելիքները, հմտությունները, մոտեցումները եւ մասնագիտական որակները.

շարժունակություն՝ անհատների՝ իրենց երկրից դուրս ֆիզիկական կամ վիրտուալ տեղաշարժը՝ ուսանելու, հետազոտական գործունեություն իրականացնելու, դասավանդելու կամ աշխատելու նպատակով.

ոչ ֆորմալ ուսուցում՝ կրթական կամ մասնագիտական պատրաստման շրջանակում ուսուցում, որի դեպքում ուշադրությունը կենտրոնացվում է աշխատանքային գործունեության վրա, եւ որը չի կազմում ֆորմալ կրթության համակարգի մաս.

ուսուցման ոչ ավանդական եղանակներ՝ այն կրթական ծրագրերի տրամադրման եւ ուսուցման գործունեության իրականացման ֆորմալ, ոչ ֆորմալ եւ ինֆորմալ մեխանիզմներ, որոնց հիմքում ուղղակիորեն ընկած չեն դասավանդողի եւ սովորողի միջեւ առերես շփումները.

մասնակի ճանաչում՝ լրիվ եւ ավարտված որակավորման մասնակի ճանաչում, որը չի կարող լիովին ճանաչվել՝ հաշվի առնելով ճանաչման հարցերով

իրավասու մարմնի կողմից էական տարբերությունների հաստատումը.

մասնակի ուսումնառություն՝ բարձրագույն կրթության ծրագրի ցանկացած մաս, որը գնահատվել է, եւ չնայած նրան, որ այն ինքնին ամբողջական ծրագիր չէ, ապահովում է գիտելիքների, հմտությունների, մոտեցումների եւ մասնագիտական որակների զգալի չափով ձեռքբերում.

նախորդ ուսուցում՝ փորձ, գիտելիքներ, հմտություններ, մոտեցումներ եւ մասնագիտական որակներ, որոնք անհատը ձեռք է բերել ֆորմալ, ոչ ֆորմալ կամ ինֆորմալ ուսուցման արդյունքում, ինչը գնահատվում է ուսուցման արդյունքների, նպատակների կամ չափանիշների որոշակի խմբի հիման վրա.

որակավորում՝

- ա) **բարձրագույն կրթության որակավորում՝** իրավասու մարմնի կողմից տրված ցանկացած աստիճան, դիպլոմ, ատեստատ կամ վկայական, որով հաստատվում է բարձրագույն կրթության ծրագիրը հաջողությամբ ավարտելու փաստը կամ անհրաժեշտության դեպքում նախորդ ուսուցումը,
- բ) **բարձրագույն կրթության մատչելիություն ապահովող որակավորում՝** իրավասու մարմնի կողմից տրված ցանկացած աստիճան, դիպլոմ, ատեստատ կամ վկայական, որով հաստատվում է կրթական ծրագիրը հաջողությամբ ավարտելու փաստը կամ անհրաժեշտության դեպքում՝ նախորդ ուսուցումը, եւ որով որակավորում ունեցողին տրվում է բարձրագույն կրթություն ստանալու նպատակով ընդունելության համար դիտարկվելու իրավունք.

որակավորված դիմորդ՝ անհատ, որը բավարարել է համապատասխան չափորոշիչները եւ ունի բարձրագույն կրթություն ստանալու նպատակով ընդունելության համար դիմելու իրավունք.

որակավորումների շրջանակ՝ որակի ապահովման ընթացակարգն անցած որակավորումների՝ չափորոշիչների որոշակի խմբի համաձայն դասակարգման, հրապարակման եւ կազմակերպման համակարգ.

որակի ապահովում՝ շարունակական գործընթաց, որով իրավասու մարմնի/մարմինների կողմից գնահատվում է բարձրագույն կրթության համակարգի, հաստատության կամ ծրագրի որակը՝ շահագրգիռ կողմերին հավաստիացնելու համար, որ մշտապես պահպանվում եւ կատարելագործվում են ընդունելի կրթական չափանիշները.

ճանաչում՝ ճանաչման հարցերով իրավասու մարմնի կողմից օտարերկրյա կրթության որակավորման, մասնակի ուսումնառության կամ նախորդ ուսուցման վավերության եւ ակադեմիական մակարդակի պաշտոնական հաստատում՝ դիմորդի համար այնպիսի արդյունքներ ապահովելու համար, որոնք ներառում են հետեւյալը, բայց չեն սահմանափակվում դրանցով՝

- ա) բարձրագույն կրթություն ստանալու նպատակով ընդունելության համար դիմելու իրավունք, եւ (կամ)
- բ) աշխատանքի տեղավորման տարբերակներ փնտրելու հնարավորություն.

տարածաշրջան՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից տարածաշրջանային գործունեություն իրականացնելու նպատակով ՅՈՒՆԵՍԿՕ-ի սահմանման համաձայն որոշված տարածաշրջաններից որեւէ մեկը, մասնավորապես՝ Աֆրիկա, Արաբական պետություններ, Ասիա եւ Խաղաղօվկիանոսյան երկրներ, Եվրոպա եւ Լատինական Ամերիկա, ինչպես նաեւ Կարիբյան ավազանի երկրներ.

ճանաչման վերաբերյալ տարածաշրջանային կոնվենցիաներ՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի տարածաշրջաններից յուրաքանչյուրում բարձրագույն կրթությանը վերաբերող որակավորումների ճանաչման վերաբերյալ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոնվենցիաներ, այդ թվում՝ «Միջերկրական ծովին սահմանակից արաբական եւ եվրոպական պետություններում բարձրագույն կրթության ոլորտում ուսումնական ծրագրերի, դիպլոմների եւ աստիճանների ճանաչման մասին» կոնվենցիա.

պահանջներ՝

- ա) **ընդհանուր պահանջներ՝** պայմաններ, որոնք պետք է բավարարվեն բարձրագույն կրթության կամ դրա կոնկրետ մակարդակի մատչելիություն կամ կոնկրետ մակարդակում բարձրագույն կրթության որակավորում ձեռք բերելու համար,
- բ) **հատուկ պահանջներ՝** պայմաններ, որոնք, ի լրումն ընդհանուր պահանջների, պետք է բավարարվեն բարձրագույն կրթության կոնկրետ ծրագրով ընդունելության կամ ուսումնառության կոնկրետ ոլորտում բարձրագույն կրթության հատուկ որակավորում ձեռք բերելու համար.

էական տարբերություններ՝ օտարերկրյա որակավորման եւ Կողմ պետության որակավորման միջեւ առկա զգալի տարբերություններ, որոնք ամենայն հավանականությամբ թույլ չեն տա դիմորդին հաջողությամբ իրականացնել ցանկալի գործունեությունը, ինչպես օրինակ՝ հետեւյալը, բայց

չսահմանափակվելով դրանցով՝ հետագա ուսուցում, հետազոտական գործունեություն կամ աշխատանքի տեղավորման հնարավորություններ:

ԲԱԺԻՆ II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հոդված II

Հիմքում դնելով ճանաչման վերաբերյալ տարածաշրջանային կոնվենցիաների համակարգումը, վերանայումներն ու ձեռքբերումները եւ ընդլայնելով դրանց ծավալները՝ սույն կոնվենցիայի նպատակներն են՝

1. խթանել եւ ամրապնդել բարձրագույն կրթության ոլորտում համագործակցությունը.
2. բարձրագույն կրթության ոլորտում միջազգային համագործակցության նպատակով աջակցություն ցուցաբերել միջտարածաշրջանային նախաձեռնություններին, քաղաքականություններին եւ նորարարություններին.
3. դյուրացնել համաշխարհային շարժունակությունը եւ բարձրագույն կրթության ոլորտում վաստակի ձեռքբերումը՝ որակավորում ունեցողների, բարձրագույն ուսումնական հաստատությունների, գործատուների եւ սույն կոնվենցիայի Կողմ պետությունների ցանկացած այլ շահագրգիռ կողմերի փոխադարձ օգուտի համար՝ ըմբռնելով եւ հարգելով Կողմ պետությունների բարձրագույն կրթության համակարգերի բազմազանությունը.
4. ապահովել բարձրագույն կրթությանը վերաբերող որակավորումների արդար, թափանցիկ, հետետողական, համաձայնեցված, ժամանակին եւ հուսալի ճանաչման համար համաշխարհային ներառական շրջանակ.
5. հարգել, պահպանել եւ պաշտպանել բարձրագույն ուսումնական հաստատությունների եւ բարձրագույն կրթության համակարգերի ինքնավարությունն ու բազմազանությունը.
6. ամրապնդել որակավորումների որակի եւ հուսալիության նկատմամբ հավատն ու վստահությունը, ի թիվս այլնի, բարոյական եւ էթիկական նորմերի տարածման միջոցով.
7. խրախուսել բարձրագույն ուսումնական հաստատություններում եւ բարձրագույն կրթության համակարգերում որակի ապահովման

մշակույթը եւ զարգացնել որակի ապահովման հարցում, որակավորումների շրջանակներում եւ որակավորումների ճանաչման հարցում հուսալիության, հետետողականության եւ փոխընդունման համար անհրաժեշտ կարողությունները՝ միջազգային շարժունակությունը խթանելու նպատակով:

8. խրախուսել մատչելի, թարմացված, հավաստի, թափանցիկ եւ վերաբերելի տեղեկությունների մշակումը, հավաքումը եւ փոխանցումը, ինչպես նաեւ շահագրգիռ կողմերի շրջանում՝ Կողմ պետությունների եւ տարածաշրջանների միջեւ լավագույն գործելակերպերի տարածումը:
9. որակավորումների ճանաչման միջոցով խրախուսել ներառական եւ հավասար հիմունքներով որակյալ բարձրագույն կրթության մատչելիությունը եւ խթանել հարատեւ ուսուցման հնարավորություններ բոլորի, այդ թվում՝ փախստականների եւ տեղահանված անձանց համար:
10. նպաստել համաշխարհային մակարդակով մարդկային եւ կրթական ռեսուրսների օպտիմալ օգտագործմանը՝ նպատակ ունենալով խրախուսել կրթությունը հանուն կայուն զարգացման, եւ աջակցել բոլոր հասարակությունների կառուցվածքային, տնտեսական, տեխնոլոգիական, մշակութային, ժողովրդավարական եւ սոցիալական զարգացմանը:

ԲԱԺԻՆ III. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆԸ ԿԵՐԱԲԵՐՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԾԱՆԱԶՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հոդված III

Բարձրագույն կրթությանը վերաբերող որակավորումների ճանաչման համար սույն կոնվենցիայում սահմանվում են հետեւյալ սկզբունքները:

1. Անհատներն ունեն իրենց որակավորումները գնահատման ներկայացնելու իրավունք՝ բարձրագույն կրթության ծրագրերով ընդունելության համար դիմելու կամ աշխատանքի տեղավորման հնարավորություններ փնտրելու նպատակով:
2. Որակավորումների ճանաչումը պետք է լինի թափանցիկ, արդար, ժամանակին եւ խտրականությունը բացառող՝ յուրաքանչյուր Կողմ պետության կանոններին եւ կարգավորումներին համապատասխան, եւ պետք է լինի գնային տեսանկյունից մատչելի:

3. Ճանաչման վերաբերյալ որոշումների հիմքում ընկած են վստահությունը, հստակ չափորոշիչները եւ արդար, թափանցիկ ու խտրականությունը բացառող ընթացակարգեր, ինչպես նաեւ դրանցով ընդգծվում է բարձրագույն կրթության՝ որպես հանրային բարիքի՝ հավասար հիմունքներով մատչելիության առաջնային կարեւորությունը, ինչի արդյունքում կարող են ստեղծվել աշխատանքի տեղավորման հնարավորություններ:
4. Ճանաչման վերաբերյալ որոշումների հիմքում ընկած են բարձրագույն կրթության համակարգերի, հաստատությունների, ծրագրերի եւ որակի ապահովման մեխանիզմների վերաբերյալ համապատասխան, հավաստի, մատչելի եւ թարմացված տեղեկություններ, որոնք տրամադրվել են Կողմ պետության իրավասու մարմինների, պաշտոնական ազգային տեղեկատվական կենտրոնների կամ համանման սուբյեկտների կողմից:
5. Ճանաչման վերաբերյալ որոշումները կայացվում են ամբողջ աշխարհում բարձրագույն կրթության համակարգերի բազմազանության պատշաճ նկատառումով:
6. Ճանաչման հարցերով իրավասու մարմինները, որոնք ճանաչման նպատակով իրականացնում են գնահատումներ, գործում են բարեխղճորեն՝ որոշումների համար տալով հստակ հիմնավորումներ, եւ ունեն ճանաչման վերաբերյալ որոշումները բողոքարկելու մեխանիզմներ:
7. Իրենց որակավորումների ճանաչմանը ձգտող դիմորդները բարեխիղճ կերպով տրամադրում են իրենց ձեռք բերած որակավորումների վերաբերյալ համապատասխան եւ ճշգրիտ տեղեկություններ ու փաստաթղթեր եւ ունեն բողոքարկելու իրավունք:
8. Կողմ պետությունները հանձն են առնում ընդունել բարձրագույն կրթության որակավորումներին առնչվող խարդախ գործելակերպերի բոլոր ձեւերի վերացմանն ուղղված միջոցներ՝ խրախուսելով Կողմ պետությունների միջեւ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը եւ կապերի ստեղծումը:

ԲԱԺԻՆ IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԿՈՂՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն կոնվենցիայում Կողմ պետությունների համար սահմանվում են հետեւյալ

պարտավորությունները.

Հոդված IV. Բարձրագույն կրթության մատչելիություն ապահովող որակավորումների ճանաչումը

1. Իր բարձրագույն կրթության համակարգի մատչելիության ապահովման նպատակներով յուրաքանչյուր Կողմ պետություն ճանաչում է մյուս Կողմ պետություններում ձեռք բերված որակավորումները եւ փաստաթղթով կամ վկայականով հաստատված նախորդ ուսուցումը, որոնք համապատասխանում են այդ Կողմ պետություններում բարձրագույն կրթության մատչելիության ընդհանուր պահանջներին, եթե չի հաստատվում էական տարբերությունների առկայությունն այն Կողմ պետությունում մատչելիության ընդհանուր պահանջների, որտեղ ձեռք է բերվել որակավորումը, եւ այն Կողմ պետության ընդհանուր պահանջների միջեւ, որտեղ հայցվում է որակավորման ճանաչումը: Հակառակ դեպքում բավարար է, որ Կողմ պետությունը մեկ այլ Կողմ պետությունում ձեռք բերված որակավորում ունեցողին ընձեռի այդ որակավորման գնահատում ստանալու հնարավորություն:
2. Ուսուցման այն ճանաչված ոչ ավանդական եղանակներով ձեռք բերված որակավորումները, որոնց նկատմամբ պետք է կիրառվեն որակի ապահովման համեմատական մեխանիզմներ, կգնահատվեն Կողմ պետության կամ դրա բաղկացուցիչ միավորի կանոնների եւ կարգավորումների համաձայն՝ օգտագործելով այն նույն չափորոշիչները, որոնք կիրառվում են ուսուցման ավանդական եղանակներով ձեռք բերված համանման որակավորումների նկատմամբ:
3. Եթե որակավորմամբ ապահովվում է այն Կողմ պետության բարձրագույն ուսումնական հաստատությունների կամ բարձրագույն կրթության ծրագրերի միայն կոնկրետ տեսակների մատչելիություն, որտեղ ձեռք է բերվել որակավորումը, ապա յուրաքանչյուր Կողմ պետություն այդպիսի որակավորում ունեցողների համար առկայության դեպքում ապահովում է իր բարձրագույն կրթության համակարգի մաս կազմող հաստատությունների կամ ծրագրերի համանման կոնկրետ տեսակների մատչելիություն, եթե չի հաստատվում էական տարբերությունների առկայությունը:

Հոդված V. Բարձրագույն կրթության որակավորումների ճանաչումը

1. Յուրաքանչյուր Կողմ պետություն ճանաչում է մեկ այլ Կողմ պետությունում տրված բարձրագույն կրթության որակավորումը, եթե չի հաստատվում էական տարբերությունների առկայությունն այն որակավորման, որի ճանաչումը հայցվում է, եւ այն Կողմ պետության համապատասխան որակավորման միջեւ, որտեղ հայցվում է ճանաչումը: Հակառակ դեպքում բավարար է, որ Կողմ պետությունը մեկ այլ Կողմ պետությունում տրված բարձրագույն կրթության որակավորում ունեցողին ընձեռի այդ որակավորման գնահատում ստանալու հնարավորություն՝ որակավորում ունեցողի հարցման հիման վրա:
2. Ուսուցման այն ճանաչված ոչ ավանդական եղանակներով ձեռք բերված բարձրագույն կրթության որակավորումները, որոնց նկատմամբ պետք է կիրառվեն որակի ապահովման համեմատական մեխանիզմներ, եւ որոնք համարվում են Կողմ պետության բարձրագույն կրթության համակարգի մաս, կգնահատվեն այն Կողմ պետության կամ դրա բաղկացուցիչ միավորի կանոնների եւ կարգավորումների համաձայն, որտեղ հայցվում է ճանաչումը՝ օգտագործելով այն նույն չափորոշիչները, որոնք կիրառվում են ուսուցման ավանդական եղանակներով ձեռք բերված համանման որակավորումների նկատմամբ:
3. Միջազգային համատեղ աստիճանների շնորհում նախատեսող այն անդրսահմանային կրթության կամ ցանկացած այլ համատեղ ծրագրի միջոցով ձեռք բերված բարձրագույն կրթության որակավորումները, որն իրականացվել է մեկից ավելի երկրներում, որոնցից առնվազն մեկը սույն կոնվենցիայի Կողմ պետություն է, գնահատվում է այն Կողմ պետության կամ դրա բաղկացուցիչ միավորի կանոնների եւ կարգավորումների համաձայն, որտեղ հայցվում է ճանաչումը՝ օգտագործելով այն նույն չափորոշիչները, որոնք կիրառվում են մեկ երկրում իրականացվող ծրագրի միջոցով ձեռք բերված որակավորումների նկատմամբ:
4. Մեկ այլ Կողմ պետությունում տրված բարձրագույն կրթության որակավորման՝ Կողմ պետությունում ճանաչման արդյունքը պետք է լինի հետեւյալներից առնվազն մեկը՝
 - ա) դրանով որակավորում ունեցողին իրավունք է տրվում դիմելու

բարձրագույն կրթությունը շարունակելու նպատակով ընդունելության համար այն նույն պայմաններով, որոնք գործում են այն Կողմ պետության բարձրագույն կրթության որակավորումներ ունեցողների համար, որտեղ հայցվում է ճանաչումը, եւ (կամ)

բ) դրանով որակավորում ունեցողին իրավունք է տրվում բարձրագույն կրթության որակավորման հետ կապված կոչումն օգտագործելու այն Կողմ պետության կամ դրա բաղկացուցիչ միավորի կանոնների եւ կարգավորումների համաձայն, որտեղ հայցվում է ճանաչումը:

Ավելին, գնահատմամբ եւ ճանաչմամբ որակավորված դիմորդներին կարող է ընձեռվել աշխատանքի տեղավորման տարբերակներ փնտրելու հնարավորություն այն Կողմ պետության կամ դրա բաղկացուցիչ միավորի օրենքներին եւ կարգավորումներին համապատասխան, որտեղ հայցվում է ճանաչումը:

5. Եթե ճանաչման հարցերով իրավասու մարմինը կարող է հաստատել էական տարբերությունների առկայությունն այն որակավորման, որի ճանաչումը հայցվում է, եւ այն Կողմ պետության համապատասխան որակավորման միջեւ, որտեղ հայցվում է ճանաչումը, ապա ճանաչման հարցերով իրավասու մարմինը փորձում է պարզել, թե արդյոք կարող է շնորհվել մասնակի ճանաչում:
6. Յուրաքանչյուր Կողմ պետություն կարող է անդրսահմանային կրթության կամ իր իրավազրոության տարածքում գործող օտարերկրյա ուսումնական հաստատությունների միջոցով ձեռք բերված բարձրագույն կրթության որակավորումների ճանաչումը դարձնել հնարավոր՝ Կողմ պետության կամ դրա բաղկացուցիչ միավորի օրենսդրության կամ կարգավորումների կոնկրետ պահանջների կատարման կամ այդ հաստատությունների ծագման Կողմ պետության հետ կնքված կոնկրետ համաձայնագրերի հիման վրա:

Հոդված VI. Մասնակի ուսումնառության եւ նախորդ ուսուցման ճանաչումը

1. Յուրաքանչյուր Կողմ պետություն կարող է բարձրագույն կրթության ծրագրի ավարտման կամ անհրաժեշտության դեպքում բարձրագույն կրթություն ապահովող ուսումնառության շարունակության նպատակով եւ հաշվի առնելով կրթության մատչելիությանը վերաբերող Կողմ պետությունների օրենսդրությունը՝ ճանաչել փաստաթղթով կամ

վկայականով հաստատված մասնակի ուսումնառությունը կամ փաստաթղթով կամ վկայականով հաստատված նախորդ ուսուցումը, եթե չի հաստատվում, որ առկա են էական տարբերություններ մասնակի ուսումնառության կամ նախորդ ուսուցման եւ բարձրագույն կրթության ծրագրի այն մասի միջեւ, որին դրանք փոխարինելու են այն Կողմ պետությունում, որտեղ հայցվում է ճանաչումը: Հակառակ դեպքում բավարար է, որ Կողմ պետությունը մեկ այլ Կողմ պետությունում փաստաթղթով կամ վկայականով հաստատված մասնակի ուսումնառություն կամ փաստաթղթով կամ վկայականով հաստատված նախորդ ուսուցում անցած անհատին ընձեռի այդ մասնակի ուսումնառության կամ նախորդ ուսուցման գնահատում ստանալու հնարավորություն՝ տվյալ անհատի հարցման հիման վրա:

2. Ուսուցման այն ճանաչված ոչ ավանդական եղանակներով տրամադրվող բարձրագույն կրթության ծրագրերի՝ փաստաթղթով կամ վկայականով հաստատված մասնակի ավարտը, որոնց նկատմամբ պետք է կիրառվեն որակի ապահովման համեմատական մեխանիզմներ, եւ որոնք համարվում են Կողմ պետության բարձրագույն կրթության համակարգի մաս, գնահատվում է Կողմ պետության կամ դրա բաղկացուցիչ միավորի կանոնների կամ կարգավորումների համաձայն՝ օգտագործելով այն նույն չափորոշիչները, որոնք կիրառվում են ուսուցման ավանդական եղանակներով տրամադրվող մասնակի ուսումնառության նկատմամբ:
3. Միջազգային համատեղ աստիճանների շնորհում նախատեսող այն անդրսահմանային կրթության կամ ցանկացած այլ համատեղ ծրագրի միջոցով տրամադրվող բարձրագույն կրթության ծրագրերի՝ փաստաթղթով կամ վկայականով հաստատված մասնակի ավարտը, որն իրականացվել է մեկից ավելի երկրում, որոնցից առնվազն մեկը սույն կոնվենցիայի Կողմ պետություն է, կգնահատվի Կողմ պետության կամ դրա բաղկացուցիչ միավորի կանոնների եւ կարգավորումների համաձայն՝ օգտագործելով այն նույն չափորոշիչները, որոնք կիրառվում են մեկ երկրում անցած մասնակի ուսումնառության նկատմամբ:

Հոդված VII. Փախստականների եւ տեղահանված անձանց մասնակի ուսումնառության կամ որակավորումների ճանաչումը

Յուրաքանչյուր Կողմ պետություն իր կրթական համակարգի շրջանակներում

Եւ իր սահմանադրական, օրենսդրական եւ կարգավորող դրույթներին համապատասխան ձեռնարկում է անհրաժեշտ եւ իրագործելի քայլեր այն հանգամանքի արդարացի եւ արդյունավետ գնահատման ողջամիտ ընթացակարգեր մշակելու համար, թե արդյոք փախստականները եւ տեղահանված անձինք բավարարում են բարձրագույն կրթության մատչելիության, բարձագույն կրթության ծրագրերով կրթությունը շարունակելու կամ աշխատանքի տեղավորման հնարավորություններ փնտրելու համապատասխան պահանջները, այդ թվում՝ այն դեպքերում, երբ մեկ այլ երկրում անցած մասնակի ուսումնառությունը, ստացած նախորդ ուսուցումը կամ որակավորումները չեն կարող ապացուցվել փաստաթղթային եղանակով:

Հոդված VIII. Գնահատման եւ ճանաչման համար անհրաժեշտ տեղեկությունները

1. Յուրաքանչյուր Կողմ պետություն ստեղծում է իր տարածքում ձեռք բերված որակավորումների եւ ուսուցման արդյունքների ամբողջական նկարագրության համար թափանցիկ համակարգեր:
2. Յուրաքանչյուր Կողմ պետություն իր սահմանադրական, օրենսդրական եւ նորմատիվ կարգավիճակի եւ կառուցվածքի հիման վրա հնարավոր իրագործելի սահմաններում գործարկում է իր բարձրագույն ուսումնական հաստատությունների հաստատման, ճանաչման եւ որակի ապահովման օբյեկտիվ եւ հուսալի համակարգ՝ իր բարձրագույն կրթության համակարգի նկատմամբ հավատն ու վստահությունը խթանելու նպատակով:
3. Յուրաքանչյուր Կողմ պետություն ստեղծում է ազգային տեղեկատվական կենտրոն կամ համանման սուբյեկտներ եւ աջակցում դրանց՝ իր բարձրագույն կրթության համակարգի վերաբերյալ համապատասխան, ճշգրիտ եւ թարմացված տեղեկությունների հասանելիությունն ապահովելու համար:
4. Յուրաքանչյուր Կողմ պետություն խրախուսում է տեխնոլոգիաների կիրառումը՝ տեղեկությունների հեշտ հասանելիությունն ապահովելու համար:
5. Յուրաքանչյուր Կողմ պետություն՝
 - ա) ապահովում է անհրաժեշտության դեպքում իր բարձրագույն կրթության համակարգերի, որակավորումների, որակի

ապահովման եւ որակավորման շրջանակների վերաբերյալ պաշտոնական եւ ճշգրիտ տեղեկությունների հասանելիությունը.

- բ) դյուրացնում է այլ Կողմ պետությունների բարձրագույն կրթության համակարգերի, որակավորումների եւ բարձրագույն կրթության մատչելիություն ապահովող որակավորումների վերաբերյալ ճշգրիտ տեղեկությունների տարածումը եւ հասանելիության ապահովումը.
- գ) անհրաժեշտության դեպքում տրամադրում է խորհրդատվություն եւ տեղեկություններ ճանաչման հետ կապված հարցերի, այդ թվում՝ որակավորումների գնահատման չափորոշիչների եւ ընթացակարգերի վերաբերյալ, ինչպես նաեւ Կողմ պետության օրենքներին, կարգավորումներին եւ քաղաքականություններին համապատասխան ճանաչման ոլորտում առկա լավագույն գործելակերպերին առնչվող նյութերի մշակման վերաբերյալ.
- դ) ապահովում է իր բարձրագույն կրթության համակարգի մաս կազմող ցանկացած հաստատության եւ այդպիսի հաստատություններում իրականացվող ցանկացած ծրագրի վերաբերյալ պատշաճ տեղեկությունների ողջամիտ ժամկետում տրամադրումը՝ նպատակ ունենալով հնարավորություն տալ մյուս Կողմ պետությունների իրավասու մարմիններին հավաստիանալու, թե արդյոք այս հաստատությունների կողմից տրված որակավորումների որակը բավարար հիմք է այն Կողմ պետությունում դրանց ճանաչման համար, որտեղ հայցվում է ճանաչումը:

Հոդված IX. Դիմումի գնահատումը

1. Պատշաճ տեղեկություններ տրամադրելու մասով հիմնական պատասխանատվությունը կրում է դիմորդը, որը պետք է այդ տեղեկությունները տրամադրի բարեխիղճ կերպով:
2. Յուրաքանչյուր Կողմ պետություն ապահովում է, որ իր կրթական համակարգի մաս կազմող հաստատությունները հնարավորության սահմաններում, հարցման հիման վրա, ողջամիտ ժամկետներում եւ անվճար հիմունքներով համապատասխան տեղեկություններ տրամադրեն որակավորում ունեցողին կամ այն Կողմ պետության հաստատությանը կամ ճանաչման հարցերով իրավասու մարմիններին,

որտեղ հայցվում է ճանաչումը:

3. Յուրաքանչյուր Կողմ պետություն ապահովում է, որ ճանաչման նպատակով գնահատում իրականացնող մարմինը ներկայացնի այն պատճառները, թե ինչու դիմումը չի համապատասխանում պահանջներին, կամ ներկայացնի, թե որտեղ են առկա էական տարբերություններ:

Հոդված X. Ծանաչման հարցերով իրավասու մարմինների վերաբերյալ տեղեկությունները

1. Յուրաքանչյուր Կողմ պետություն սույն կոնվենցիայի ավանդապահին ներկայացնում է այն իրավասու մարմինների վերաբերյալ պաշտոնական ծանուցում, որոնք կայացնում են իր տարածքում ճանաչման հետ կապված հարցերի վերաբերյալ որոշումներ:
2. Եթե Կողմ պետությունում առկա են ճանաչման հարցերով կենտրոնական իրավասու մարմիններ, ապա սույն կոնվենցիայի դրույթները անմիջականորեն պարտադիր են դառնում նրանց համար, եւ նրանք ձեռնարկում են անհրաժեշտ միջոցառումներ՝ տվյալ Կողմ պետության իրավազորության սահմաններում սույն կոնվենցիայի դրույթների կիրակումն ապահովելու համար:
3. Եթե ճանաչման հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելու իրավասությունը վերապահված է բաղկացուցիչ միավորին, ապա Կողմ պետությունը սույն կոնվենցիան ստորագրելիս կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ դրան միանալու մասին իր փաստաթուղթն ի պահ հանձնելիս ավանդապահին ներկայացնում է իր սահմանադրական կարգավիճակի կամ կառուցվածքի, ինչպես նաեւ դրանից հետո տեղի ունեցած ցանկացած փոփոխության մասին հակիճ գրություն: Նման դեպքերում այդպիսի պատասխանատվություն կրող բաղկացուցիչ միավորների՝ ճանաչման հարցերով իրավասու մարմինները Կողմ պետության սահմանադրական կարգավիճակի եւ կառուցվածքի շրջանակներում հնարավոր իրագործելի սահմաններում ձեռնարկում են անհրաժեշտ միջոցառումներ՝ Կողմ պետության իրավազորության շրջանակում սույն կոնվենցիայի դրույթների կիրակումն ապահովելու համար:
4. Եթե ճանաչման հետ կապված հարցերի վերաբերյալ որոշումներ

կայացնելու իրավասությունը վերապահված է առանձին բարձրագույն ուսումնական հաստատություններին կամ այլ սուբյեկտների, ապա յուրաքանչյուր Կողմ պետություն կամ դրա բաղկացուցիչ միավոր, իր սահմանադրական կարգավիճակին կամ կառուցվածքին համապատասխան, սույն կոնվենցիայի տեքստը փոխանցում է այդ հաստատություններին կամ սուբյեկտներին եւ ձեռնարկում բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ դրա դրույթների արդյունավետ կերպով դիտարկումը եւ կիրառումը խրախուսելու համար:

5. Սույն հոդվածի 2-րդ, 3-րդ եւ 4-րդ պարբերությունների դրույթները համապատասխան փոփոխություններով կիրառվում են Կողմ պետությունների՝ սույն կոնվենցիայով նախատեսված պարտավորությունների նկատմամբ:

Հոդված XI. Բարձրագույն կրթության ծրագրերով ընդունելությանը ներկայացվող լրացուցիչ պահանջները

1. Եթե բարձրագույն կրթության կոնկրետ ծրագրերով ընդունելությունը պայմանավորված է մատչելիության ընդհանուր պահանջներից բացի հատուկ պահանջների բավարարմամբ, ապա տվյալ Կողմ պետության իրավասու մարմինները կարող են այլ Կողմ պետություններում ձեռք բերված որակավորումներ ունեցողների համար սահմանել միեւնույն հատուկ պահանջները կամ գնահատել այն հանգամանքը, թե արդյոք այլ Կողմ պետություններում ձեռք բերված որակավորումներ ունեցող դիմորդները բավարարում են համարժեք պահանջները:
2. Եթե մեկ Կողմ պետությունում բարձրագույն կրթության մատչելիություն ապահովող որակավորումները տրվում են միայն որակավորման լրացուցիչ քննությունների համակցությամբ՝ որպես մատչելիության նախապայման, ապա մյուս Կողմ պետությունները կարող են մատչելիությունը պայմանավորել այդ պահանջներով կամ առաջարկել իրենց իսկ կրթական համակարգերի շրջանակներում այդպիսի լրացուցիչ պահանջների բավարարման այլընտրանք:
3. Չհակասելով IV հոդվածի դրույթներին՝ տվյալ բարձրագույն ուսումնական հաստատություն կամ այդ հաստատության կոնկրետ ծրագրով ընդունելությունը կարող է սահմանափակվել կամ լինել

ընտրովի՝ համաձայն արդար եւ թափանցիկ կարգավորումների:

4. Սույն հոդվածի 3-րդ պարբերության մասով ընդունելության ընթացակարգերը մշակվում են այնպես, որ ապահովեն III հոդվածում ներկայացված թափանցիկության, արդարացիության եւ խտրականության բացառման սկզբունքների համաձայն օտարերկրյա որակավորումների գնահատումը:
5. Չհակասելով IV հոդվածի դրույթներին՝ տվյալ բարձրագույն ուսումնական հաստատությունը ընդունելությունը կարող է հիմնվել որակավորում ունեցողի կողմից տվյալ հաստատությունում ուսուցման լեզվի կամ լեզուների կամ նշված այլ լեզուների բավարար իմացություն դրսևորելու պայմանի վրա:
6. Բարձրագույն կրթության ծրագրերով ընդունելության նպատակով յուրաքանչյուր Կողմ պետություն կարող է իր իրավազորության տարածքում գործող օտարերկրյա ուսումնական հաստատությունների կողմից տրված որակավորումների ճանաչումը դարձնել հնարավոր՝ Կողմ պետության կամ դրա բաղկացուցիչ միավորի օրենսդրության եւ կարգավորումների կոնկրետ պահանջների կատարման կամ այդ հաստատությունների ծագման Կողմ պետության հետ կնքված կոնկրետ համաձայնագրերի հիման վրա:

ԲԱԺԻՆ V. ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված XII. Կիրարկումն ապահովող կառույցները

Կողմ պետությունները համաձայնում են կիրարկել սույն կոնվենցիան հետեւյալ կառույցների միջոցով եւ դրանց հետ համագործակցությամբ.

1. Կիրակումն ապահովող ազգային կառույցներ,
2. Կիրակումն ապահովող ազգային կառույցների ցանցեր,
3. Հավատարմագրման, որակի ապահովման, որակավորումների շրջանակների եւ որակավորումների ճանաչման ազգային,

- տարածաշրջանային եւ համաշխարհային կազմակերպություններ,
4. Կողմ պետությունների միջկառավարական խորհրդատուով,
 5. Ճանաչման վերաբերյալ տարածաշրջանային կոնվենցիաների հարցերով կոմիտեներ:

Հոդված XIII. Կիրակումն ապահովող ազգային կառույցները

1. Բարձրագույն կրթության որակավորումների ճանաչումը դյուրացնելու նպատակով Կողմ պետությունները պարտավորվում են կիրարկել սույն կոնվենցիան համապատասխան կազմակերպությունների, այդ թվում՝ ազգային տեղեկատվական կենտրոնների կամ համանման սուբյեկտների միջոցով:
2. Յուրաքանչյուր Կողմ պետություն Կողմ պետությունների միջկառավարական խորհրդատուովի քարտուղարությանը կձանուցի կիրակումն ապահովող իր ազգային կառույցների կամ այդ առնչությամբ տեղի ունեցած ցանկացած փոփոխության մասին:
3. Կիրակումն ապահովող ազգային կառույցները պետք է ստեղծեն ցանցեր եւ ակտիվ մասնակցություն ունենան դրանցում:

Հոդված XIV. Կիրակումն ապահովող ազգային կառույցների ցանցերը

1. Կողմ պետությունների միջկառավարական խորհրդատուովի հովանու ներքո ցանցերը կազմվում են Կողմ պետությունների՝ կիրակումն ապահովող ազգային կառույցներից եւ աջակցում ու օժանդակում սույն կոնվենցիան գործնականում կիրարկելու հարցում:
2. Հարցման հիման վրա ցանցերի միջոցով Կողմ պետությունների համար ապահովվում է տեղեկությունների փոխանակում, կարողությունների զարգացում եւ տեխնիկական աջակցություն:
3. Ցանցերի միջոցով փորձ է արվում ամրապնդել սույն կոնվենցիայով նախատեսված միջտարածաշրջանային համագործակցությունը, եւ պահպանվում են Կողմ պետությունների միջկառավարական խորհրդատուովի հետ կապերը:
4. Կողմ պետությունները կարող են մասնակցություն ունենալ ճանաչման

վերաբերյալ տարածաշրջանային կոնվենցիաների համաձայն ստեղծված՝ գոյություն ունեցող տարածաշրջանային ցանցերին կամ ստեղծել նոր ցանցեր: Գոյություն ունեցող տարածաշրջանային ցանցերում մասնակցությունը ենթակա է համաձայնեցման ճանաչման վերաբերյալ տարածաշրջանային կոնվենցիայի հարցերով համապատասխան կոմիտեների հետ:

Հոդված XV. Կողմ պետությունների միջկառավարական խորհրդաժողովը

1. Ստեղծվում է Կողմ պետությունների միջկառավարական խորհրդաժողով (այսուհետ՝ Խորհրդաժողով):
2. Խորհրդաժողովը բաղկացած է սույն կոնվենցիայի բոլոր Կողմ պետությունների ներկայացուցիչներից:
3. Սույն կոնվենցիայի Կողմ պետություն չհանդիսացող պետությունները եւ ճանաչման վերաբերյալ տարածաշրջանային կոնվենցիաների հարցերով կոմիտեների ղեկավարները հրավիրվում են որպես դիտորդներ մասնակցելու Խորհրդաժողովի հանդիպումներին:
4. Համապատասխան միջազգային եւ տարածաշրջանային կազմակերպությունների ներկայացուցիչները, ինչպես նաեւ բարձրագույն կրթության որակավորումների ճանաչման ոլորտում ակտիվ գործունեություն իրականացնող պետական եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները նույնպես կարող են հրավիրվել որպես դիտորդներ ներկա գտնվելու Խորհրդաժողովի հանդիպումներին:
5. Խորհրդաժողովը հանդիպում է հերթական նստաշրջանում առնվազն երկու տարին մեկ անգամ: Խորհրդաժողովը կարող է հանդիպել արտահերթ նստաշրջանում այդպիսի որոշում կայացնելու դեպքում կամ Կողմ պետությունների առնվազն մեկ երրորդի պահանջով: Խորհրդաժողովն ունի նստաշրջանների միջեւ ընկած ժամանակահատվածում իրականացվող գործունեության վերաբերյալ միջանկյալ աշխատանքային ծրագիր: Խորհրդաժողովը զեկույց է ներկայացնում ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր խորհրդաժողովի յուրաքանչյուր հերթական նստաշրջանի ընթացքում:
6. Խորհրդաժողովն առաջին անգամ հանդիպում է սույն կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա ընթացքում եւ այդ ժամանակ

ընդունում է իր կանոնակարգը:

7. Խորհրդաժողովը խրախուսում է սույն կոնվենցիայի կիրառումը եւ վերահսկում է դրա կիրարկումը՝ համաշխարհային կամ միջտարածաշրջանային մակարդակում ընդունելով առաջարկություններ, հայտարարագրեր, լավագույն գործելակերպերի օրինակներ կամ ցանկացած համապատասխան լրացուցիչ տեքստ:
8. Խորհրդաժողովը կարող է ճանաչման վերաբերյալ տարածաշրջանային կոնվենցիաների հարցերով կոմիտեների հետ խորհրդակցությամբ սույն կոնվենցիայի Կողմ պետությունների համար ընդունել Կոնվենցիայի կիրարկման ուղեցույցներ:
9. Խորհրդաժողովն աջակցություն է ցուցաբերում սույն կոնվենցիայի կիրարկման նկատմամբ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ղեկավար մարմինների կողմից մոնիթորինգ իրականացնելու եւ կիրարկման վերաբերյալ այդ մարմիններին զեկուցելու հետ կապված հետագա գործունեության իրականացմանը:
10. Խորհրդաժողովը ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո համագործակցում է ճանաչման վերաբերյալ տարածաշրջանային կոնվենցիաների հարցերով կոմիտեների հետ:
11. Խորհրդաժողովն ապահովում է Խորհրդաժողովի եւ ճանաչման վերաբերյալ տարածաշրջանային կոնվենցիաների հարցերով կոմիտեների միջեւ անհրաժեշտ տեղեկությունների փոխանակումը:
12. Խորհրդաժողովն ընդունման նպատակով ուսումնասիրում է սույն կոնվենցիայի փոփոխությունների նախագծերը՝ XXIII հոդվածին համապատասխան: Ընդունված փոփոխություններով կասկածի տակ չեն դրվում սույն կոնվենցիայում նշված թափանցիկ, արդար, ժամանակին եւ խտրականությունը բացառող ճանաչման սկզբունքները:
13. Խորհրդաժողովի քարտուղարությունն ապահովվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի կողմից: Քարտուղարությունը պատրաստում է Խորհրդաժողովի փաստաթղթերը, կազմում դրա հանդիպումների օրակարգը եւ ապահովում դրա որոշումների իրականացումը:

ԲԱԺԻՆ VI. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված XVI. Անդամ պետությունների կողմից վավերացումը, ընդունումը կամ հաստատումը

1. Սույն կոնվենցիան ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ պետությունների եւ Սուրբ Աթոռի կողմից՝ իրենց համապատասխան սահմանադրական եւ օրենսդրական ընթացակարգերի համաձայն:
2. Վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենին:

Հոդված XVII. Կոնվենցիային միանալը

1. Սույն կոնվենցիան բաց է բոլոր այն պետությունների կողմից միանալու համար, որոնք ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ չեն, սակայն ՄԱԿ-ի անդամ են եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր խորհրդատու կողմից հրավիրվում են դրան միանալու:
2. Սույն կոնվենցիան բաց է նաեւ այն տարածքների կողմից միանալու համար, որոնք ունեն ՄԱԿ-ի կողմից ճանաչված լիակատար ներքին ինքնակառավարում, սակայն Գլխավոր ասամբլեայի 1514 (XV) բանաձեւի համաձայն ձեռք չեն բերել լիակատար անկախություն, եւ որոնք ունեն սույն կոնվենցիայով կարգավորվող հարցերի նկատմամբ իրավասություն, այդ թվում՝ այդ հարցերի առնչությամբ պայմանագրեր կնքելու իրավասություն:
3. Միանալու մասին փաստաթուղթն ի պահ է հանձնվում ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենին:

Հոդված XVIII. Ուժի մեջ մտնելը

1. Սույն կոնվենցիան ուժի մետ է մտնում վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին քսաներորդ փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից երեք ամիս հետո, բայց միայն այն Կողմ պետությունների համար, որոնք վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ են հանձնել այդ օրը կամ մինչեւ այդ օրը:
2. Յանկացած այլ Կողմ պետության համար սույն կոնվենցիան ուժ մեջ է մտնում վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին իր փաստաթուղթն ի պահ հանձնելուց երեք ամիս հետո:

Հոդված XIX. Սույն կոնվենցիայի Կողմ պետությունների եւ ճանաչման իրավունքները եւ պարտավորությունները փոփոխող, որոնց Կողմ են դրանք:

1. Ճանաչման վերաբերյալ ցանկացած տարածաշրջանային կոնվենցիայի վավերացում, ընդունում, հաստատում կամ դրան միացում չի համարվում սույն կոնվենցիայի վավերացման, ընդունման, հաստատման կամ դրան միանալու համար նախապայման:
2. Սույն կոնվենցիայի Կողմ պետությունները՝
 - ա) խթանում են սույն կոնվենցիայի եւ այն միջազգային պայմանագրերի, մասնավորապես՝ ճանաչման վերաբերյալ տարածաշրջանային կոնվենցիաների միջեւ փոխօգնությունը, որոնց Կողմ են դրանք. եւ
 - բ) հաշվի են առնում սույն կոնվենցիայի համապատասխան դրույթները ճանաչման վերաբերյալ տարածաշրջանային այն կոնվենցիաները մեկնաբանելիս եւ կիրառելիս, որոնց Կողմ են դրանք, ինչպես նաեւ այլ միջազգային պարտավորություններ ստանձնելիս:
3. Սույն կոնվենցիայում ոչինչ չի մեկնաբանվում որպես ճանաչման վերաբերյալ այն տարածաշրջանային կոնվենցիաներով եւ որեւէ այլ միջազգային պայմանագրով նախատեսված Կողմ պետությունների եւ էական տարբերությունների վերաբերյալ դրույթներից շեղում:
4. Սույն կոնվենցիայի, ճանաչման վերաբերյալ այն տարածաշրջանային կոնվենցիաների, ցանկացած այլ համապատասխան երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրի եւ ցանկացած այլ գոյություն ունեցող կամ հետագա պայմանագրի կամ կոնվենցիայի միջեւ համակարգված փոխգործակցություն ապահովելու նպատակով, որոնց Կողմ կարող են լինել կամ կարող են դառնալ սույն կոնվենցիայի Կողմ պետությունները, սույն կոնվենցիայում ոչինչ չի համարվում ճանաչման համար առավել նպաստավոր որեւէ դրույթից, մասնավորապես՝ ազգային տեղեկատվական կենտրոնների, ցանցերի վերաբերյալ տարածաշրջանային կոնվենցիաների եւ այլ միջազգային պայմանագրերի կողմերի միջեւ հարաբերակցությունը

Հոդված XX. Դաշնային կամ ոչ ունիտար սահմանադրական համակարգերը

Ընդունելով, որ միջազգային համաձայնագրերը հավասարապես պարտադիր են Կողմ պետությունների համար՝ անկախ նրանց սահմանադրական համակարգերից, հետեյալ դրույթները կիրառվում են այն Կողմ պետությունների նկատմամբ, որոնք ունեն դաշնային կամ ոչ ունիտար սահմանադրական համակարգ.

- ա) սույն կոնվենցիայի դրույթների առնչությամբ, որոնց կիրարկման գործառույթը պատկանում է դաշնային կամ կենտրոնական օրենսդիր իշխանության իրազրույթանը, դաշնային կամ կենտրոնական կառավարության պարտավորությունները նույնն են, ինչ այն Կողմ պետությունների դեպքում, որոնք դաշնային պետություններ չեն,
- բ) Կոնվենցիայի դրույթների առնչությամբ, որոնց կիրարկման գործառույթը պատկանում է Կողմ պետության բաղկացուցիչ միավորների իրավազրույթանը, ինչպիսիք են մարզերը, նահանգները, կոմսությունները կամ կանտոնները, որոնք դաշնության սահմանադրական համակարգի համաձայն պարտավոր չեն ձեռնարկել օրենսդրական միջոցառումներ, դաշնային կառավարությունն անհրաժեշտության դեպքում տեղեկացնում է Կողմ պետության բաղկացուցիչ միավորի իրավասու մարմիններին նշված դրույթների մասին՝ առաջարկելով ընդունել դրանք:

Հոդված XXI. Չեղյալ հայտարարելը

1. Սույն կոնվենցիայի ցանկացած Կողմ պետություն կարող է ցանկացած ժամանակ չեղյալ հայտարարել սույն կոնվենցիան:
2. Չեղյալ հայտարարելու մասին ծանուցվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենը՝ ի պահ հանձնված գրավոր փաստաթղթի միջոցով:
3. Չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում չեղյալ հայտարարելու մասին փաստաթղթի ստացումից 12 ամիս հետո: Այն որեւէ ձեռով չի ազդում կոնվենցիան չեղյալ հայտարարող Կողմ պետության՝ սույն կոնվենցիայով վերապահված պարտավորությունների վրա՝ մինչեւ այն օրը, երբ չեղարկումն ուժի մեջ է մտնում:

4. Սույն կոնվենցիան չեղյալ հայտարարելը որեւէ կերպ չի ազդում՝
 - ա) ճանաչման վերաբերյալ այն որոշումների վրա, որոնք ավելի վաղ կայացվել են սույն կոնվենցիայի դրույթների համաձայն.
 - բ) սույն կոնվենցիայի համաձայն ճանաչման նպատակով ընթացքի մեջ գտնվող գնահատումների վրա:

Հոդված XXII. Ավանդապահի գործառույթները

ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենը՝ որպես սույն կոնվենցիայի ավանդապահ, տեղեկացնում է Կազմակերպության անդամ պետություններին, XVII հոդվածում նշված՝ Կազմակերպության անդամ չհանդիսացող պետություններին, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպությանը՝

- ա) XVI եւ XVII հոդվածներով նախատեսված՝ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին բոլոր փաստաթղթերի ի պահ հանձնման մասին.
- բ) XXI հոդվածով նախատեսված չեղյալ հայտարարման դեպքերի մասին.
- գ) XXIII հոդվածի համաձայն ընդունված Կոնվենցիայի փոփոխությունների մասին եւ փոփոխությունները XXIII հոդվածով նախատեսված կարգով ուժի մեջ մտնելու օրվա մասին:

Հոդված XXIII. Փոփոխությունները

1. Սույն կոնվենցիայի ցանկացած Կողմ պետություն կարող է ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենին ուղղված գրավոր հաղորդակցության միջոցով առաջարկել սույն կոնվենցիայի փոփոխություններ: Գլխավոր տնօրենն այդ հաղորդակցությունը փոխանցում է բոլոր Կողմ պետություններին: Եթե հաղորդակցությունն ուղարկելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, Կոնվենցիայի Կողմ պետությունների ոչ պակաս, քան կեսը դրական են պատասխանում հարցմանը, ապա Գլխավոր տնօրենը Կողմ պետությունների միջկառավարական խորհրդաժողովի հաջորդ նստաշրջանի ընթացքում ներկայացնում է այդ առաջարկը՝ քննարկման եւ հնարավոր ընդունման նպատակով:
2. Փոփոխություններն ընդունվում են ներկա գտնվող եւ քվեարկող Կողմ պետությունների երկու երրորդ մեծամասնությամբ:

3. Ընդունվելուց հետո սույն կոնվենցիայի փոփոխությունները ներկայացվում են Կողմ պետություններին՝ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու նպատակով:
4. Սույն կոնվենցիայի փոփոխությունները դրանք վավերացրած, ընդունած, հաստատած կամ դրանց միացած Կողմ պետությունների համար ուժի մեջ են մտնում սույն հոդվածի 3-րդ պարբերության մեջ նշված փաստաթղթերը Կողմ պետությունների երկու երրորդի կողմից ի պահ հանձնվելուց երեք ամիս հետո: Այնուհետև սույն կոնվենցիայի ցանկացած փոփոխություն վավերացնող, ընդունող, հաստատող կամ դրան միացող յուրաքանչյուր Կողմ պետության համար նշված փոփոխությունն ուժի մեջ է մտնում այդ Կողմ պետության կողմից վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին իր փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից երեք ամիս հետո:
5. Այն պետությունը, որը սույն հոդվածի 4-րդ պարբերությանը համապատասխան փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո դառնում է սույն կոնվենցիայի Կողմ պետություն, այլ մտադրություն չհայտնելու դեպքում համարվում է՝
 - ա) սույն կոնվենցիայի Կողմ պետություն՝ հաշվի առնելով փոփոխությունները. եւ
 - բ) չփոփոխված կոնվենցիայի Կողմ պետություն՝ ցանկացած Կողմ պետության առնչությամբ, որի համար փոփոխությունները պարտադիր իրավական ուժ չունեն:

Հոդված XXIV. Գրանցումը Միավորված ազգերի կազմակերպությունում

Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության 102-րդ հոդվածին համապատասխան՝ սույն կոնվենցիան գրանցվում է Միավորված ազգերի կազմակերպության քարտուղարությունում՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի պահանջով:

Հոդված XXV. Պաշտոնական տեքստերը

Սույն կոնվենցիան կազմվել է արաբերեն, չինարեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն եւ իսպաներեն, ընդ որում, բոլոր վեց տեքստերն էլ հավասարազոր են:

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2019 թվականի նոյեմբերի 25-ին ստորագրված «Բարձրագույն կրթության որակավորումների փոխճանաչման մասին» համաշխարհային կոնվենցիայի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն**